ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐԸ*

ՄԻՔԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(Վենետիկ)

ԳԱԳ ԲԵՐԴ

Հին Արցախի և Գուգարքի սահմաններուն վրա, Գագ կոչված լեռնաշղթային մեկ բարձր գագաթին վրա շինված է «զԳագ անուանի բերդ»[1], ինչպես կկոչե Վարդան պատմիչ, և այս գավառը այժմ կհամապատասխանե Նոյեմբերյան շրջանին, լեռներու ստորոտը կտարածվի համանուն Գագ կոչված դաշտը, այս շրջանին ժամանակ մը տիրած են նաև Աղվանից թագավորները։

Ո՞վ շինած է այս անվանի բերդը և իր անունով կոչած Գագա բերդ, և լեռները և դաշտը Գագա դաշտ։ Այս կոչումը մեզ շատ հեռուները չի կրնար տանել, քանի որ այս նշանավոր բերդը հիշողները եղած են մեր Վարդան և Կիրակոս պատմիչները միայն, հետևաբար Գագ բերդը շինված պետք է ըլլա Ժ—ԺԲ դարերուն մեջ, սակայն այս երկու պատմիչները, Գագ բերդի պատմության միացուցած են Ս. Մեսրոպի խաչի պատմությունը, և որուն իրականությունը եթե ընդունինք պետք է երթանք մինչև Ե դար՝ գրոց գյուտի ժամանակները, սակայն մեր պատմության մեջ Ե գարուն Գագիկ անունով մեկը չի հիշվիր, որ ապրած և տիրած ըլլա Արցախի և Գուգարքի շրջաններուն, և հոն շինած ըլլա իր անունով բերդ մը։ Սակայն Խորենացին իր պատմության մեջ կհիշե «Գագ իշխանն Հաշտենից», որ ապրած է Ս. Վրթանես հայրապետի օրով, և որ իբրև դեսպան կղրկվի Կոստանդիանոս կայսեր Խոսրովը թագավորեցնելու համար հայկական գահին վրա։ Հ. Ալիշան այս վկայության վրա կոթնած, կհամարի, որ «Գագիկս այս հնագոյն թուի քան զամենայն ծանօթ թագաւորս Բագրատունիս եւ Կորիկեանս»[1]։ Հ. Ալիշան այս եզրակացությանը կհաձի, որպեսզի կարենա Ս. Մեսրոպի խաչի պատմությունը, որ Վարդան և Կիրակոս կապած են Գագ անվանի բերդին հետ, կարենա հաշտեցնել, որ ըսել է, Գագ Հաշտենից իշխանը Գ դարուն շինած է Գագ բերդը և Ս. Մեսրոպ Ե դարուն հոն կանգնած է նշանավոր Ս. Սարգիս խաչը, և այն օրհնած, ինչպես կերգե մեր շարականներու հորինողը, «Խաչաշարշար սուրբ դիտապետ, նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի առաւել պայծառ ի գլուխ Գագայ, ի գագաթան տեղւոջ օրհնեալ սրբոյն Մեսրոպայ...»[4]։ Սակայն Հ. Ալիշանի այս ենթադրությունը մեզի անընդունելի կթվի, որովհետև Հաշտենից Գագ իշխանը չէր կրնար հեռավոր երկրի մը լեռներուն վրա շինել բերդ մը իր անունով, մանավանդ որ նույն իշխանին այդ կողմերը արշաված կամ գացած ըլլալը չեն

* Սույն հոդվածաշարը հեղինակի համանուն աշխատության երեք հատվածներն են.—Խմբ.։

1 Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 145։

2 Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1955, էջ 431։

3 Վարդան, նույն տեղում, էջ 145, ծանոթ.։

4 «Շարական...», Վենետիկ, 1898, էջ 1222։

հիշատակեր մեր պատմիչները, այնպիսի ժամանակաշրջանի մը մեջ, որ բացարձակ իշխանապետություն մը գոյություն ուներ մեր երկրին մեջ. և կարելի չէր որ իշխան մը ուրիշ իշխանի մը հողերուն վրա ոտք գներ, ուր կմնա թե իր անունով բերդ մը շինել. ուստի մեզի կմնա նորեն վերադառնալ Ժ—ԺԲ դար, և այս ժամանակաշրջանին մեջ զետեղել Գագ բերդի շինությունը։ Վարդան և Կիրակոս որքան որ Գագ բերդին կկապեն Ս. Մեսրոպի խաչի պատմությունը, սակայն անոնք որոշ կրսեն՝ «ի Գագկայ թագաւորէն շինեալ»[5], այդ ըստ մեզի այս Գագիկ թագավորը պետք է ըլլա, Բագրատունյաց նշանավոր Գագիկ Շահնշահ թագավորը, որ տիրած է այդ կողմերուն, կռիվներ մղած Դավիթ Անհողին հետ, և ինչպես կրսեն մեր պատմագիրները, այդ կողմերը շինած 12 ուրիշ բերդեր։

Իսկ ինչ որ կվերաբերի Ս. Մեսրոպի խաչի պատմության, որ կապված է Գագ բերդին, կարելի է ըսել, թե ասիկա հետին դարերու հարմարցում մրն է. Գագ Ս. Խաչի եկեղեցիին արժեք տալու համար անոր կանգնումը և օրհնությունը կապած են Ս. Մեսրոպի անվան, և որչափ որ պարզամտությամբ Վարդան համոզված կերեվի Ս. Մեսրոպեն կանգնված ըլլալը, սակայն Կիրակոս կասկածով կմոտենա այս հարցին, և որոշ չրնդունիր Ս. Մեսրոպեն կանգնված ըլլալը, այլ կրսե՝ «զոր կանգնեալ ասեն զնա սրբոյն Մեսրոպայ վարդապետին մերոյ»[6]։ Մանավանդ որ այսպիսի նշանավոր խաչի մը կանգնումը Ս. Մեսրոպեն հիշված չէ Ե—Ժ դարու մեր պատմիչներեն, ինչ որ եթե իրական ըլլար, անկարելի էր, որ անտեսեին անոնք. այսպես կենթադրենք, թե Գագ բերդը շինված է Ժ—ԺԲ դարուն Գագիկ Շահնշահ Բագրատունի հզոր թագավորեն, իսկ Ս. Մեսրոպի խաչի պատմությունը հերյուրված և Գագ բերդե կապված է Ժ դարուն վերջերը։

Գագ բերդի շինությունը եղած ըլլալու է հավանաբար Գագիկ Շահնշահի արշավանքներու շրջանին Արցախի և Գուգարքի շրջաններուն, ուր կային ուրիշ շատ մը բերդեր, և Գագ բերդ կհիշվի Կիրակոս և Վարդան պատմիչներեն, միայն Ժ—ԺԲ դարուն եղած պատերազմներու ժամանակ, ուրիշ բերդերու կարգին, որոնք ամենքն ալ Բագրատունյաց իշխանության շրջանին շինված բերդեր են, որոնց վրա կուգան թաթար զորքեր Մոլար Նոյին առաջնորդությամբ[7]։

Գագ բերդը Բագրատունյաց անվանի և հզոր բերդերեն մին եղած է, հյուսիսեն եկող հարձակումներու դեմ զորավոր պատվար մը, սակայն Բագրատունիներու ընտանիքին ճյուղավորումով Գագ բերդը ևս կանցնի նույն ընտանիքին զանազան իշխաններուն ձեռքը, ապա Կյուրիկեան Բագրատունի թագավորներու ճյուղին տան մաս կկազմե, 1178-ին վրաց Թամար թագուհին իր Զաքարե և Իվանե իշխաններուն միջոցով կտիրանա Գագ բերդին, և ժամանակ մը վերջ, Զաքարյաններու կատարած հավատարիմ ծառայության համար Գագ բերդը նվեր կուտա Զաքարյաններու մեկ ճյուղին, «իր հավատարմության համար, կգրե Մանանդյան, այս Զաքարեն, որ Վահրամ Զաքարյանի որդին էր. Թամար թագուհիեն իրրև պարգև ստացավ Գագ բերդը և բազում այլ բերդեր և ավաններ»[8]։

---

5 Վարդան, նույն տեղում, էջ 145։

6 Կիրակոս Գանձակեցի, Համառոտ պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 134։

7 Նույն տեղում, էջ 145։

8 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952։

Մեր պատմիչները Զաքարյաններու այս ճյուղին նախահայրը կհամարեն Վահրամ, և զայն կանվանեն «մեծ իշխանն Վահրամ տէրն Գագկայ բերդին»[9]։

Այս Վահրամն էր որդի Պլուզ Զաքարիայի, որ տեր էր Գագա և Տավուշ բերդերուն, և խնամի էր Խաչենո իշխաններուն, և ժառանգ Կյուրիկյան թագավորաց Աղվանից, ինչպես կհամարի Ալիշան ևս[10]։ Վահրամի կհաջորդե իր որդին Աղբուղա, որ իր հոր հետ մասնակցած էր սելճուքներու դեմ իր հոր մղած պատերազմներուն և շատ քաջություններ ըրած։ Մոլար Նոյինն, կատղած հայ իշխաններու դիմադրական ոգիին վրա, մեծ բանակով կհարձակի Վահրամ իշխանի բերդերուն և ավաններուն վրա, Վահրամ մեծ քաջություններ կընե, բայց իր բանակին մեջ հիվանդություն, և զորավարներուն մեջ ալ անհամաձայնություն իյնալով, կստիպվի ինչ ինչ բերդեր լքել, մանավանդ երբ կլսե թե թաթարները գրաված են Շամքոր բերդը խարդախությամբ, Վահրամ իր Աղբուղա որդիին հետ բերդե բերդ խույս կուտա, բայց լսելով որ Մոլար Նոյինն խոստացած էր չվնասել բերդականներուն, կստիպվի վար իջնալ իր թաքստոցներեն և անձնատուր ըլլալ[11]։ Վահրամ իշխանը կվերստանա իր շատ մը բերդերը և հնազանդելով թաթար իշխանության, երկար տարիներ խաղաղ կանցնե և ինքզինքը շինարարական կյանքի կնվիրե։

Աղսարդանա կհաջորդե Գագ բերդին մեջ իր որդին՝ Կյուրիկե Բագրատունի, ասոր ժամանակ կրկին հայ և վրացի իշխանները կապստամբին թաթարներու դեմ, թաթարները կրկին կպաշարեն Շամքոր, վրացիները հայ իշխաններեն օգնություն կխնդրեն, բայց հայերը չեն կրնար հասնիլ, և Շամքոր կրկին կգրավվի և ավարի կտրվի, թաթարները ապա կուգան հայ ապստամբ իշխաններու վրա, «եկին ամենայն ախիւն իւրեանց ի Տաւուշ և ի Կածանէթ եւ ի Նոր բերդ, եւ ի Գագ, եւ որ շուրջ զնօքօք, եւ ի նեղ արկեալ պաշարեցին զնոսա»[12]։

1235-ի ժամանակները Գագ բերդը կրկին պաշարված կգտնենք թաթարներեն, հայերը այս անգամ զորավոր դիմադրություն մը ցույց կուտան, թաթար գորքերը հուսահատած կվերցնեն Գագի պաշարումը և կհարձակին Տավուշի վրա, և անկից Մածնաբերդի վրա կուգան, «զոր ունէր Կիւրիկէ Բագրատունի որդի Աղսարթանայ»[13]։ Տավուշ բերդին մոտերը Վարդան վարդապետ քաղրայը մը փորած էր և հոն ապաստանած թաթարներու երեսեն, թաթարները այս իմանալով և կարծելով թե հոն շատ գանձ և հարստություն կա, կուգան և զայն կպաշարեն, կբռնեն վարդապետը և անկե փրկագին կպահանջեն զայն աղատ արձակելու համար, Վարդան վարդապետ կխնդրե, որ զինքը ազատ թողուն, որ երթա մոտակա բերդի բնակիչներեն ողորմություն խնդրե և բերե վճարե, Վարդան երթալով Գագ բերդ մեծկակ գումար մը նվեր կստանա և զայն տալով թաթարներու զորավարին կազատի գերութենե[14]։ Այս թվականեն վերջ Գագ բերդը մեր պատմիչներեն չի հիշվիր, հավանաբար այն Կյուրիկ-

---

9 Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում, էջ 144։

10 Վարդան, նույն տեղում, էջ 144, ծան.։

11 Նույն տեղում, էջ 144—145։

12 Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում, էջ 134—135։

13 Նույն տեղում, էջ 129։

14 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մաս Ա. էջ 130—135։

յան վերջին թագավորներեն լքված է թաթարական շարունակական արշավանքներեն, և այսպես քանդված են անոր հզոր պարիսպները, որ գրեթե երկու դար կրցավ տոկալ հյուսիսեն եկող հարձակումներուն դեմ։

Գաղ երկար դարեր մեր հայ ժողովուրդին ուխտատեղի եղած է, հոն միշտ ալ կանգուն մնացեր է Ս. Խաչ եկեղեցին, ուր ամեն տարի ուխտի կերթար հայ ժողովուրդը, այնպես որ 1838-ին հայ ուխտավոր մը Կոթի գյուղեն՝ Խաչատուր Արզումանյան նորոգած է Ս. Խաչի եկեղեցին[15]։

Բարխուդարյան 1800-ական թվականներուն այցելած է բերդիս և համառոտ նկարագրություն մը ևս տված իր Արցախ գործին մեջ. «Դաղ սարի եղերքները պարիսպ ձգված է վաղուց, և ձևացած է անմատչելի. զի առանձնացած է սարս, բավական ամուր է բերդս, ափսոս որ մեջը ջուր չունի, փորված են վիմափոր ավազաններ հոն հավաքելու համար աւձրեի ջուրերը, քսանև ավելի բարափոր այրեր կան հոն, որոնք հին ատեն իբրև զորանոց գործածված են»[16]։

Գաղ բերդի փառավոր անցյալեն հազիվ քանի մը խլյակներ տակավին կանգուն կմնան, Ս. Սարգսի եկեղեցին և փոքրիկ մատուռ մը, սրբատաշ քարերով շինված, առջևը ունի փոքրիկ գավիթ մը, իր կաթողիկեով, կա նաև ուրիշ փոքրիկ մատուռ մը կոփածո քարերով շինված[17]։

ԴԱՐՅՈՒՆԻՑ ԲԵՐԴ

Հին նշանավոր բերդավան Այրարատյան Կոգովիտ գավառին մեջ, և որ ժն դարուն սկսյալ կոչված է նաև Պայազիտի բերդ, Սուլթան Պայազիտի անունով, որ զայն հիմնովին նորոգած է։

Թե ո՞վ է բերդավանիս շինողը, և թե ինչու Դարույնք և Դարյունից բերդ կոչված է, մեզի անծանոթ կմնա։ Կհիշվի մեր պատմության մեջ Դ դարեն սկսյա , և նախ եղած է հզոր ամրոց մը, ուր կպահեն արքունի գանձերը, իսկ հետո շուրջը բնակություն հաստատվելով եղած է բերդավան, և Բագրատունյաց իշխաններուն հայրենի տունը։ Բերդս ոմանք Բասենի մեջ կդնեն, ինչ որ հակառակ է մեր պատմիչներու տվյալներուն, այսպես կգրե Բուզանդ. «և բերդն Դարոնից որ է յերկրին Կոգայ»[18]։ Իսկ Հովհան կաթողիկոս խոսելով Սմբատ Բագրատունիի թաղման մասին կգրե. «Բարձեալ տարան զմարմին նորա ի Հայք և եղին ի Դարոյնս որ է ի Գոկ գաւառի»[19]։

Բերդիս շինողները եղած են հավանորեն Արշակունի թագավորները, որովհետև անոնց իշխանության շրջանին է որ կհիշվի իբրև ամուր տեղի և մանավանդ գանձատուն, և այս խոսքով Բ-ի ժամանակ, որ է շուրջ 350 թվականներուն, «և բերդն Դարոնից, որ է յերկրին Կոգայ, ուր կային գանձք Արշակունեացն սաստիկ յոյժ...»[20]։ Եվ այսպես կշարունակվի հիշվիլ բերդս Մեծին Տրդատա մահվնե վերջ իսկ, որ է 337—342-ի ատենները՝ «և խոյս ետ թագաւորն հայոց խոսքով յիւրմէ եղբարցն նոյն ի Սանեսանայ արքայն Մաղ-

15 Բարխուդարյան, Արցախ, էջ 396։
16 Նույն տեղում։
17 Բնաշխարհիկ բառարան, էջ 442։
18 Փավստոս Բուզանդացի, Պատմություն հայոց, Վենետիկ, 1933, էջ 193։
19 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն, Երուսաղեմ, 1867, էջ 283։
20 Փավստոս Բուզանդացի, նույն տեղում, էջ 193։

քթաց, եւ անկաւ յամուրն Դարիւնից յերկիրն Կովգայ»[21]։ Դարոնից բերդը Արշակ թագավորին ժամանակ ևս կարևոր դեր մը խաղացեր է մեր պատմության մեջ, եղած է Արշակի հառաջապահ զիրքերեն մին և պարսիկներու հորձանքին դեմ ամուր պատսպարան։ Այսպես, պարսիկ Վաչագան իշխանը երբ մուտք կգործեր հայ հողերու՝ վրա, Վասակ քաջ իշխանը անոր դեմ կկանգնի, Արշակը, որ տակավին երիտասարդ էր, իբրև ապահով տեղ կգտնեղ Դարունից բերդին մեջ, և ինքը ասպարեզ կիջնե Վաչագանի դեմ. «և ինքն թողուր զթագաւորն Արշակ յամուր բերդին Դարօնից»[22], և խիզախ խոյանքով հաղթանակ մը կտանի. այս կռվին պարսից բանակին մեջ էր նաև Մերուժան Արծրունի, որ կորագլուխ պատերազմի դաշտեն խույս կուռա տեսնելով Վաչագանի բանակներու խորտակվիլը։

Շապուհ պարսից թագավորը կկատաղի իր այս ամոթալի պարտության վրա, և ավելի մեծ և հզոր բանակներով կելլե Դարյունից բերդին պաշտպաններուն դեմ, և կուզե շուտով այս պատմության ամոթը ջնջել իր ճակատեն, սակայն Վասակ Մամիկոնյան անտեղիտալի կմնա իր զիրքերուն վրա, և Դարյունից բերդը անսասան կդիմադրե։ Շապուհ տեսնելով որ քաջությամբ պիտի չկարենա առնել Դարյունից բերդը, խարեբայության կդիմե, ինչպես ծանոթ է մեր պատմությունեն, Արշակը գերի կբռնե և կղրկե Անհուշ բերդը, իսկ Վասակը մորթազերծ կրնե։

Կանցնին ժամանակներ, հայերը տակավին իրենց ձեռքին մեջ կպահեն Դարյունից բերդը, մինչև Պապին գալուստը, որոնք զինքը իր հոր գահին վրա թագավորեցնելով անոր կհանձնեն Դարյունից բերդին բանալիները. պարսիկները կարծելով, թե հայոց բարոյական ուժը ջախջախվեր է Արշակի և Վասակի տխուր մահով, կվերադառնան Հայաստան և կպաշարեն նորեն Դարյունից բերդը, ուր ամրացած էր Պապ իր թագավորական ընտանիքով, և այս անգամ Վասակի տեղ Դարյունից բերդը կպաշտպաներ Մուշեղ Մամիկոնյան, որ առյուծի մը կատաղությամբ կդիմադրե պարսիկ հորձանքին դեմ, և պարսկական արյունով կթրջե Դարյունից բերդին պատերը, մինչև որ Պապ կհասնի Բյուզանդիոնեն. «եւ եկն եմուտ Պապ յերկիրն հայոց եւ թագաւորեաց ի վերայ նորա, եւ թափեաց յինքն զամուր ամուր բերդիցն, զոր կա եալ էին պարսիկք, եւ բերդն Դարօնից, զոր էր յերկրին Կովգայ»[23]։

Արշակունիներեն Դարյունից բերդի իշխանությունը կանցնի Բագրատունի իշխաններու ձեռքը և երբ 616-ին կմեռնի Սմբատ բազմահաղթ Պարսկաստանի մեջ, անոր մարմինը մեծ հանդեսով կբերեն և կթաղեն Դարյունից բերդին մեջ. «ի բնիկ հանգստարանի եւ եդին ի տապանի ի գեղն Դարիւնս, որ է ի Կոգովիտ գաւառի...»[24]։

Ասկե վերջ Դարյունս բերդավանը Բագրատունյաց դամբարանը կըլլա, և հոն կթաղվին բազմաթիվ թագավորներ և իշխաններ Բագրատունյաց ընտանիքեն։ Այսպես՝ 642-ին հոն կթաղվի Սմբատի որդին. «եւ բարձին զմարմին նորա եւ թաղեցին առ հոր իւրում ի Դարիւնս...»։

21 Նույն տեղում, էջ 27—28։
22 Նույն տեղում, էջ 160։
23 Նույն տեղում, էջ 193։
24 Ղեվոնդ, Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 18.

734-ին Դարյունից բերդի իշխանությունը կանցնի Աշոտ պատրիկ Բագրատունիին, որ Վասակի որդիներից էր, որուն հաջողության վրա նախանձելով Մամիկոնյաններեն Գրիգոր և Դավիթ կփորձեն սպանել զինքը, սակայն երբ Աշոտ կիմանա անոնց դավադրությունը «ժողովէ զախս տանն իւրոյ յամրոցն Դարիւնից, եւ զտիկինն եւ զամենայն ընտանիս իւր, եւ թողուր ի վերայ նորա պահապանս զամրոցն պահել, եւ ինքն անցեալ գնայր յաշխարհն ասորւոց առ իշխանն իսմայէլի Մրուան...»[25]։ Մրվան մեծ պատիվներով կընդունի Աշոտը, և զորք և պատիվ տալով զայն իր երկիրը կվերադարձնե, բայց քանի մը տարի վերջ՝ 751-ին Գրիգոր իշխանը կերպով մը զինքը ձերբակալել կուտա, և աչքի լույսեն զրկելով, կղրկե Մրվանին, Մրվան, այս անգամ վճռական կռիվներով կհալածե Գրիգոր իշխանին և Աշոտը Դարյունից բերդին մեջ կհաստատե։ Աշոտ այս դեպքերեն վերջ 13 տարի ևս ապրելով կվախճանի խործերության մեջ և կթաղվի Դարյունից բերդը[26]։

628-ին ժամանակները կտկարանան Բագրատունի իշխանները և կզորանան Արծրունիները, և Գագիկ Արծրունի իր սահմանները ընդարձակելով կհասնի մինչև Կոգովիտ, և պաշարելով Դարյունից բերդը, չի կրնար գրավել, կդիմե խորամանկության, և ինչպես կըսե Թովմա Արծրունի, «պաշարեալ զանառն Դարիւնս զողացեալ առնու ի գիշերի ըստ յաջողելոյ նմա ի վերուստ...»[27]։

Այսպես Արծրունիները տեր կդառնան ոչ միայն Դարյունից բերդին, այլև ամբողջ Կոգովիտ գավառին և բազմաթիվ բերդերու։

Այս թվականեն բավական ժամանակ վերջ՝ 1021-ին կրկին Արծրունի իշխաններն են որ կտիրեն այս կողմերուս, և երբ 1021-ին Արծրունի Սենեքերիմ թագավորը նեղված սելճուքներու արշավանքներեն և կողոպուտեն, կորոշե թողուլ իր հայրենի երկիրը և երթալ հունաց Հայաստանին մեջ, կլքե նաև Դարյունից բերդը իր բախտին, սակայն Արծրունի քանի մը իշխաններ անհամաձայն Սենեքերիմի այս որոշումին, կորոշեն չհեռանալ իրենց երկրեն և դիմադրել սելճուքներու. այս քաջ և խիզախ իշխաններեն էին Համազասպ Արծրունի և Վասակ, որոնք զուխ անցած ուրիշ քանի մը քաջ իշխաններու կշարունակեն պայքարը սելճուքներուն դեմ, «զի նախարարք տանն Արծրունեաց Համազասպ եւ եղբարք իւր և զորք նորին մնացին անդրէն ի կողմանս Վասպուրականի աշխարհին. և Վասակ որդի Աշոտոյ և որք ի տոհմէ Ամատունեաց և Տրոմեաց մնացին անդրէն, ոմանք յամուրն բերդի Դարիւնս գեօղ և ի ծագն Մակուայ և ոմանք ի ձորն Արագեղոտայ ամրացեալք սփոփէին շուրջ զգաւառօքն ի պէտս կերակրոց եւ անդէն դառնային յամուրս իւրեանց»[28]։

Աշոտ պատրիկ անվանի իշխանապետը հայոց յոթներորդ դարուն մեջ, ինչպես տեսանք վերև, կշինե Դարունից եկեղեցին, ուր կդնե Քրիստոսի մարգեղության պատկերը արևմուտքեն բերած, և եկեղեցին կանվանե Ամենափրկիչ, ինչպես կավանդեն մեր պատմիչներեն ոմանք։ Այս պատկերը ասկից տարած են Հավուց Թառ, և այժմ կպահվի Էջմիածնի մեջ։ Ժե դարուն վերջին անգամ կհիշե բերդս մեր պատմիչներեն Թովմա Մեծոփեցի։

25 Նույն տեղում, էջ 119։
26 Նույն տեղում, էջ 144։
27 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 18։
28 Նույն տեղում, էջ 322։

Կիլիկյան թագավորության կործանումեն վերջ, Արևելյան Հայաստանը ևս անտեր կմնա և առիթեն օգտվելով Լենկթիմուր թուրք իշխանը կհարձակի հայկական փոքրիկ անկախ մնացած իշխանություններուն վրա, և վերջին հարվածը կուտա։ Լենկթիմուր կգրավե նաև Կոգովիտի շատ մը բերդավանները, սակայն Դարյունից բերդը կդիմադրե շնորհիվ Սուլթան Պայազիտ քաջ իշխանին, որ ապաստանած այս անառիկ բերդավայրին մեջ կդիմադրե, և մանավանդ անմերձենալի դարձնե ու համար հիմնովին կնորոգե բերդին պարիսպները և աշտարակները. Լենկթիմուր այս անգամ բերդին դեմ կղրկե Շեյխ Ալի Պեհատոր, որ կորագլուխ ետ կդառնա. Թիմուր կղրկե երրորդ անգամ Ջեմիր Հանի Սեյֆեթթին, որ ավելի իմաստուն կգտնվի։ Տեսնելով, որ պիտի չկարենա գրավել Դարյունից բերդը, երկար շրջանակով մը պաշարումի տակ կառնե, և գտնելով բերդին ջուր տանող ճամփան, անոր ջուրերը կկտրե։ Սուլթան Պայազիտ կստիպվի վար գալ իր թաքստոցեն և անձնատուր ըլլալ հաղթողին։ Թիմուր կներե անոր, և զինքը նորեն իր իշխանության մեջ կհաստատե։

1554-ին Պայազիտի որդին կտիրե բերդիս, որուն վրա կուգան Սլիվա կոչված քյուրտերը և կգրավեն։ 1705-ին Մեհմետ բեկ նորեն կգրավե, բայց ինքը ևս իր կարգին իրեններեն խեղդամահ կըլլա, և իրեն կհաջորդե Մահմուտ փաշա[29]։

1828-ին ռուսաց զորավար վրացի Ջանչեվացի իշխանը, քուրդերուն հարված մը տալով կգրավե Պայազիտը։ Երկրորդ անգամ Արշակ Ղուկասով 1877-ին իջնելով Իգդիրի կողմերեն մտավ Պայազիտ։ Ալի Քամել փաշան անպատրաստ ըլլալով խույս տվավ քաղաքեն։ Հայ և մահմեդական ժողովուրդը մեծ պատվով ընդունեցին ռուս զորքերը։ Ռուսերը շուտով նորոգեցին Պայազիտի բերդը և պարիսպներուն վրա հզոր մարտկոցներ հաստատեցին, և 2000 պահակազորք թողլով հեռացան։ Ռուս բանակը հեռանալեն վերջ Վանի կուսակալ Ֆայիտ փաշան բազմաթիվ վայրենի զորքերով մտավ Պայազիտ, գրավեց քաղաքը, և ավարի տվավ, հայերը և քիչ թվով ռուսեր, ապաստանած Պայազիտի բերդին մեջ, ժամանակ մը ևս դիմադրեցին, մինչև որ բերդին ջուրը սկսավ պակսիլ, այն ատեն գաղտնի ղրկեցին ապարանցի պատանի մը ռուսաց բանակը, որ քյուրտի տարազ հագված և խենթ ձևանալով հասավ ռուսաց բանակը և լուրը հաղորդեց*։ Արշակ Ղուկասով նորեն իջավ Կոգովիտ, և կատաղի կռիվե մը վերջ ցրվեց թուրք զորքերը և գրավեց Պայազիտը։ Այս պատերազմին մեջ ռուսները կորսնցուցին 120 հոգի, իսկ հայերը 300 հոգի[30]։ Վերջին անգամ բերդս կհիշե Հակոբ Կարնեցի XVII դարուն իր ժամանակագրության մեջ. «Ունի մեծ բերդ պարսպաւոր ի վերայ վիմի հաստատեալ, որ հայ բառով Դարոյնք կոչեն... և է բերդս այս պարսպաւորիւք եւ հեծելօք ամրացեալ խմբող ի մարտ պատերազմի։ Եւ ունի վանք հռչակաւոր շինեալ ի սորին Մագիստրոսի՝ յանուն Ս. Կուսին. և է անդ գերեզման Մագիստրոսի»[31]։

29 «Տեղագրութիւն Հայոց մեծաց», էջ 93։

* Այս դեպքը Րաֆֆի երկար վիպասանելով կպատմե իր «Խենթ»-ին մեջ։

30 «Այրարատ», էջ 499։

31 «Բնաշխարհիկ բառարան», էջ 372—377 և «Մանր ժամանակագրություններ», հատ. Բ, էջ 555։

ԱՐՇԱՄԱՇԱՏ ԿԱՄ ԱՐՇՈՒՄԱՇԱՏ

Հին և նշանավոր բերդաքաղաք, Ծովք Շահունյաց գավառին մեջ, և զոր կհիշեն շատ մը հայ թե օտար պատմիչներ, այսպես Տակիտոս զայն կհիշատակե և կկոչե „Arsamosata"[32], Պլինիոս „Ἀρσαμόσατα"[33], Պտղոմեոս՝ „Ἀρσαμοσάτων", արար պատմագիր Պելհատորի զայն կանվանե „Simasat", իսկ Մատթ. Ուռհայեցի՝ «Աշմուշատ»։

Ուսկի՞ց առաջ եկած է անունիս ծագումը. հայ թե օտար պատմիչները անվանս ծագման մասին ոչէ բացատրություն չեն տար, հիմնադիրը բերդաքաղաքիս իր անունով կոչած է զայն, Արշամ-Արշամաշատ, որ է Արշամին շինած քաղաքը, իսկ բուն բառը Արշամաշատ, ինչպես կրսե Հյուբշման, կնշանակե «Ուրախություն Արշամի»[34]։ Այս քաղաքը Քրիստոսե առաջ 235-ին Արշամ թագավորեն հիմնվեցավ, իսկ Քրիստոսե առաջ 202-ին կհիշվի իբրև ամրոց հայոց Քսերքսես թագավորին»։ Ինչպես կտեսնվի, անունս պարսկական ծագում ունի և ինչպես ըսինք «ուրախություն Արշամի» կնշանակե[35]։ Ինչ որ կերևի Խորենացիի պատմութենեն, Արշամ Միջագետքի ասորվոց թագավորներեն մին էր, և տիրած էր նաև այս կողմերուն, սակայն թե ով էր Արշամ՝ մեզի մութ կմնա[36]։ Սակայն անոր անունին ստուգութենեն ավելի մեզի կարևոր է գիտնալ անոր դիրքը և տեղը, ո՞ր գավառին մեջ կգտնվեր, և ո՞ւր էր անոր բուն տեղը։ Որովհետև այս հին բերդաքաղաքը դարերու ընթացքին շատ տեղեր փոխեր է, շատ պատերազմներ տեսած և շատ անգամ կործանած և շինված, ուստի այսօր մեզի անծանոթ կմնա անոր ուր տեղ գտնվիլը, այս պատճառով էր, որ երբ 1822-ին Հ. Լուկաս Ինճիճյան նշանավոր աշխարհագիրը իր Ստորագրություն հին Հայաստանին կհրատարակեր, Աշմուշատ անունը անծանոթ քաղաքներու կարգին դրած է[37], սակայն այսօր շուրջ 150 տարիներ վերջ նոր պատմագիրներ լույս եկած են, նոր հետազոտություններ կատարված են հայ թե օտար հնախոսներեն և կարելի է ազոտ լույս մը սփռել քաղաքիս դիրքին և տեղվույն վրա։

Հայկական կայսրության տկարացումով, հռոմեացիները կտիրեն այս կողմերուս և իրենց իշխանության տակ կառնեն նաև Աշմուշատը։ Մարկոս Ավրեղիանոս բերդաքաղաքիս տիրապետության առթիվ անոր անունով դրամ ալ կոխել տված է հունարեն գրով. «Արմասոսսադդինոն» կոչելով , որ է, ըստ Ինճիճյանի, «Արշոմատացվոց»[38]։ Արշամաշատի աղավաղյալ ձևը եղած է դարերու ընթացքին Աշմուշան կամ Արշումաշատ, այսպես, Արշամաշատ կգրեն օտար պատմիչներ, ինչպես տեսանք, Պլինիոս „Ἀσαμοσατα", իսկ Պտղոմեոս „Ἀρσαμοσάτων" ուղիղ ձևով. մեր հայ պատմիչներն են որ աղավաղված կամ կրճատված ձևը կգործածեն[39]։ Սակայն շատ վերջավորությունը հայկական է. և ցույց կուտա հայ աշխարհի պատկանիլը, այսպես, ունինք Արտաշատ, Վարդանաշատ, Վասակաշատ, Երվանդաշատ և այլն։

---

32 Տակիտոս, տարեգիրք 15. 10։

33 Պլինիոս, N. H. 6, 9, 26։

34 Հյուբշման, Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 313։

35 Th Reinach, Revue des etudes grecques, 3, 369. Հյուբշման, էջ 313։

36 Խորենացի, նույն տեղում, էջ 222—225։

37 Հ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանի, Վենետիկ, էջ 60։

38 Նույն տեղում,

39 Նույն տեղում, էջ 60։

Սակայն մեր այս աշխատության կարևոր նպատակն է գիտնալ, թե ո՞ւր կգտնվեր այս հին Արշամաշատ հայկական քաղաքը, այսօր անոր հետքը կորսվեր է մեր աշխարհագրության վրայեն, միայն հին աշխարհագիրներն են, որ կասկածով կնշանակեն, առանց գիտնալու անոր որոշ տեղը. այս մասին զանազան են թե՛ հայ, թե՛ օտար պատմիչներու կարծիքները։ Օտար պատմիչներեն ոմանք անոր հետ Ծոփք Շահունյաց գավառին մեջ բլալը նշելե վերջ, իրը հարցը տեղվույն կուգա կտատամսին, և անորոշ, և կամ ընդհանուր տեղ մը կդնեն, այսպես, Տակիտոս «Եփրատի մոտ»—„Euphrati pronimum", Պլինիոս՝ «Եփրատի և Տիգրիսի միջև»=„μεταξυ μεν Ευφρατου και του Τιγριδος πόλεων Αρσαμωσατα"[40]։ Իսկ Գեորգ Կիպրացի շատ ընդհանուր, «Չորրորդ հայոց մեջ»[41]։ Այս ամենեն կհետևի, թե օտար պատմագիրներու մտքին մեջ Արշամուշատի տեղը անորոշ էր, իսկ հայ պատմիչները շատ անգամ շփոթեր են Արշամաշատը Արշարունիքի հետ, հավանարար, նմանաձայնության պատճառով. այսպես, Խորենացին կգրե «Որ ըստ հիւսիսոյ Աշմունիք, առ Սրմանց լերամբ, որ կոչի կատար երկրի...»[42]։ Այս շփոթությունը ավելի առաջ կտանի Բուզանդ, Տարոնի մեջ դնելով Արշամունիքը. «Մրջնիկ յԱրշամունեաց տեղեացն ի նահանդին Տարօն գաւառին»[43], նույն սխալը կշարունակվի Ղազար Փարպեցիի քով, Որը կգրեր՝ «և տեսեալ Խուրսայ, որ էր ի գաւառէն Արշամունեաց ի գեղջէն Շիրմանց»[44]. հոս, ինչպես որոշ կտեսնվի, Ղազար Փարպեցի կշփոթի Արշամունիքը Արշարունիքի հետ, որովհետև Շիրմանց գյուղը Արշաբունյաց գավառին մեջ կգտնվի և ոչ թե Արշամունյաց, և ինչպես կգրե Ինճիճյան «թվի վրիպակ գրչաց»[45], որովհետև երկու գավառներու իրարու մերձավորությունը պատճառ եղած է շփոթության։ Այս զանազան կարծիքները չկարենալով հաշտեցնել, Ինճիճյան անծանոթ քաղաքներու կարգին կդնե, հուսալով ապագային նոր աղբյուրներու լույսին տակ որոշե անոր տեղը։ Մենք մեր ուսումնասիրության ընթացքին, հետևելով մեր նախնիքներու և օտար պատմիչներու տվյալներուն, այնպես կենթադրենք, որ Արշամաշատը փնտրելու ենք Ծոփք Շահունյաց գավառին մեջ, Խարբերդի և Բալուի միջև։ Ինճիճյանի ուշադրութենեն վրիպեր է, կամ լույս տեսած չէր Մ. Ուռհայեցիի պատմության հետևյալ տողերը, ուր կրսե. «յայսմ աւուր գայ Թոռնիկ իշխանն սակաւ արամբ եւ մտանէր իւր բերդն յԱշմուշատ, քաղաք, որ ի յԱրծնոյ վերայ...»։ Հոս սխալ գրչագրությամբ եղած է յԱրծնոյ, պետք է կարդալ «ի վերայ Արածանոյ»[46] ուր, ինչպես կտեսնվի, քիչ շատ կորոշվի Աշմուշատի տեղը, Արածանի գետին վրա քաղաք մըն էր։ Այս մեր կարծիքը կհաստատվի նաև Գեորգ Կիպրացիեն, որ կրսե. „Castrum Arsamosata, ad Arsaniam fluvium"[47]։ Այս վկայությենեն, ինչպես կտեսնվի, Աշմուշատ Արածանիին եզերքն էր, և սովորական քաղաք մը չէր, այլ բերդաքաղաք մը, պարսպավոր և զորացած հզոր աշտարակներով։

---

40 Պլինիոս, N. H., 6, 9, 26։
41 Գեորգ Կիպրացի, էջ 48։
42 «Աշխարհացոյց Մովսես Խորենացւոյ», Վենետիկ, 1881, էջ 31։
43 Փավստոս Բիւզանդ, նույն տեղում, էջ 132։
44 Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1933, էջ 483։
45 «Ստորագրութիւն հին Հայաստանի», էջ 402։
46 Մատթեոս Ուռհայեցի, Պատմութիւն, Երուսաղեմ, 1869, էջ 250—252։
47 Գեորգ Կիպրացի, էջ 171։



Բերդաքաղաքս շատ անգամներ կործաներ և կրկին շինվեր է, 768-ին երբ Աբբասյանները այս կողմերուն կտիրեն, Աբբաս էլ-Մանսուրի հրամանով արաբները զայն կրկին կշինեն[48]։ Աշմուշատ հետևաբար կգտնվեր Բալուի հարավ-արևմուտքը, Խարբերդ տանող ճամփուն վրա, և այսօրվան փոքրիկ Շեամուշ կոչված գյուղին տեղը կամ մոտերը, ինչպես կգնե Ինճիճյան իր նոր Հայաստանի գրքին մեջ, և նույն տեղը Քիպերթ իր քարտեզին վրա կնշանակե*։ Բալուի դիմացը Արածանիի հարավային ափերուն վրա կբարձրանան Տավրոսի լեռները, որոնք կերկարին մինչև Խարբերդի Ծովք լճակը, այս լեռներուն ստորոտն էր հավանաբար Աշմուշատը, որոնց ստորոտեն կբխի նաև Տիգրիսի մեկ փոքրիկ ակը։

Այս ենթադրությամբ կարելի է հաշտեցնել մասամբ օտար պատմագիրներու տվյալները, այսպես Պլինիոսի „Euphrati proximum“, իսկ Պտղոմեոսի „Εὐφρατῆς-ταῦρος“, և Տակիտոսի „Εὐφρατοῦ καὶ τῶν Τιγρίδος πολέων“[49] վկայությունները։

Մատթեոս Ուռհայեցի երբ կխոսի Թոռնիկ իշխանին մասին, կհիշե Խարբերդը և Աշմուշատը, այս երկու քաղաքներուն միջև էր Ալելուս նշանավոր դաշտը, ուր եղավ Փիլարտոսի և Թոռնիկ իշխանի կռիվները, Թոռնիկ հաղթական կվերադառնա իր բերդը՝ Աշմուշատ, իսկ Փիլարտոս Խարբերդ կապաստանի[50]։

Ժ դարուն երբ Մեծ Հայքի մեկ մասը կանցնի հռոմայեցիներուն ձեռքը, և հոն կհաստատվի հռոմեական իշխանություն մը, նույն անունները կհիշա-

48 Նույն տեղում, էջ 172։
49 Գեորգ Կիպրացի, էջ 171։
50 Մատթեոս Ուռհայեցի, նույն տեղում, էջ 250։

տակվին Կոստանդին Պորփյուրեժենի պատմության մեջ, և կշարունակվի Աշմուշատը ըլլալ հռոմեական կայսրության գլխավոր ամրոցներեն մին, Եփրատի ափին վրա, մինչև, ինչպես տեսանք, արարներու գալուստը Հայաստան, և անոր նորոդվիլը արաբներեն։

Հռոմեական կայսրության կհաջորդե Բյուզանդական կայսրությունը, որ երկար ժամանակներ կիշխե այս կողմերուն, և Բագրատունյաց թագավորության անկումով, և Անիի կործանումով, այս կողմերը և Կիլիկիա կբազմանան հայ իշխաններ, և հոն անկախ կառավարություններ կկազմեն։ Այս իշխաններեն էին Փիլարտոս և Գող Վասիլ, իսկ դեպի արևելք՝ Տարոնի մեջ Թոռնիկ իշխանը, որ Մամիկոնյան Մուշեղի թոռնիկն էր, որ օգտվելով Բյուզանդական կայսրության տկարացումեն կտիրե այս կողմերուն, ինչպես Փիլարտոս և Գող Վասիլ Մարաշի, Խարբերդի և ամբողջ Եփրատի շրջանին։

Փիլարտոս լավ աչքով չէր նայեր Թոռնիկի իշխանության տարածվելուն, ուստի 1073-ի ժամանակները կծրադրե իրեն ենթարկել Սասունի Թոռնիկ իշխանը։ Թոռնիկ իշխան այս որ կլսե, ձայն կուտա ամբողջ Սասունի, և զորահավաք կրնե, «եւ արար ժողով զամենայն Սասունն յիսուն հազար հետեւակաց և վեց հազար ձիաւորաց»[51], և կաճապարե կհասնի Ճապաղջուր, ուր կսպասե Փիլարտոսի գալստյան, բայց Փիլարտոս խորամանկ հայը, կդանդաղի ելլել Թոռնիկի դեմ, Թոռնիկ տեսնելով որ կուշանա Փիլարտոս և ինք չէր կրնար երկար զենքի տակ պահել այդքան զորք, զանոնք կցրվե, պահելով իր քովը միայն հազար հոգի, և կամրանա Աշմուշատի մեջ, որ իր բերդ սահմանային քաղաքն էր, և ահա Փիլարտոս կհասնի, այս լուրը հանկարծակիի կբերե Թոռնիկը, որ ցրված էր զորքին մեծ մասը, հավաքել կրկին կարճ ժամանակի մը մեջ անկարելի էր, ճակատեն փախչիլ իրեն պատիվ չէր համարեր, ուստի կորոշե իր սակավաթիվ զորքերով դիմադրել, Թոռնիկ կաշտանակե իր սպիտակ նժույգին վրա, և բուռ մը քաջերու գրուխը անցած կքալե դեպի Խարբերդ, երկու բանակները իրարու կհանդիպին Ալելուա դաշտին մեջ։

Թոռնիկ փառավոր հաղթանակ մը կտանի ուրացող հայ իշխանին վրա, Փիլարտոս շունչը Խարբերդ կառնե, դաշտին վրա թողլով բազմաթիվ մեռյալ և վիրավոր, իսկ իր քաջ իշխաններեն շատեր ալ գերի կիյնան Թոռնիկի ձեռքը, Թոռնիկ հաղթանակով Աշմուշատ կմտնե, և անկից, բերդին վրա թողլով պահապան զինվորներ, կերթա Սասուն, ուր ժողովուրդը զինքը կդիմավորե մեծ հանդիսությամբ։

Սակայն Փիլարտոս իր այս Ալելուա դաշտին մեջ կրած պարտության աղտը կուզեր ջնջել իր ճակատեն, և որովհետև չէր կրնար զենքի ուժով, մտածեց խարդախությամբ մեջտեղեն վերցնել Թոռնիկ իշխանը։ Դժբախտ պարագա մը անզգուշությամբ վերջ տվավ այդ քաջ մարդուն կյանքին, որ մինչև իր վերջին շունչը կռվեցավ բռնության դեմ, երբ օր մը եկած էր առանձին Աշմուշատի ամրությունները դննելու, ահա դարանակալ ձեռքե մը նետահար գետին ինկավ։

Թոռնիկ երկու որդիներ կթողուր Սասունի, Զորտվանել և Վասակ։ Սասունի մեջ գրված Ավետարանի մը հիշատակարանը համառոտ տեղեկություններ մը կուտա Թոռնիկի որդուն Զորտվանելի սերունդին և իշխանության մասին Սասունի մեջ։ Հիշատակարանը գրված է 1169—70-ի ժամանակները, զոր

51 Նույն տեղում, էջ 248—250։

Սրվանձտյանց հրատարակած է իր Թորոս Աղրար գրքի մեջ. ըստ որում 1160-ին տակավին Զորտվանե ի սերունդեն որդվոց որդին իշխած են Սասունի վրա։ Ահա Զորտվանելյանց սերունդը ըստ Հ. Ալիշանի[52]։

Վիգեն Ա
↓
Մուշեղ
↓
Թոռնիկ Ա
↓
Զորտվանել Ա—Վասակ
↓
Վիգեն Բ—Զորտվանել Բ
↓
Թոռնիկ Բ—Վասիլ—Շահնշահ

Աշմուշատ մինչև ԺԲ դար տակավին կանգուն կմնա և կհիշվի իբրև եպիսկոպոսանիստ քաղաք, այնպես որ Հոռոմկլայի ժողովին մեջ, որ եղած է ԺԲ դարուն, կհիշվի Աշմուշատի եպիսկոպոսը՝ «Թեոդոր եպիսկոպոս Աշմուշատի»[53]։ Այս թվականես վեր Աշմուշատ չի հիշվիր մեր պատմության մեջ։

КРЕПОСТИ АРМЕНИИ

МИКАЕЛ ОВАНЕСЯН (Венеция)

(Резюме)

В статье, являющейся частью одноименной работы автора, на основании армянских и иностранных первоисточников выясняется местоположение трех древнеармянских крепостей (Гаг, Дарюниц и Аршамашат, или Аршумашат), время их постройки, рассматриваются точки зрения различных авторов по этим вопросам. Мы приводим подробные данные по истории этих крепостей, привлекая сведения, содержащиеся в средневековой армянской литературе.

52 «Հայապատում», Վենետիկ, 1901, հատ. Բ, էջ 213—216։
53 «Ստորագրություն հին Հայաստանի» I. 60։